ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 8224

27 սեպտեմբեր 2024թ.

<<ԼԻԴԵՐ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
Հասցե՝ ք. Երևան, Արամի փողոց 82-84

Հարգելի պարոն Ղազարյան,

Հայտնում եմ, որ Մասիսի համայնքապետարանի և <<Լիդեր Սերվիս>> ՍՊԸ-ի միջև 15.08.2024թ. կնքվել են NN ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/77-1 և ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/81-2 ծածկագրերով ապրանքների մատակարարման գնման պայմանագրեր, սակայն <<Լիդեր Սերվիս>> ՍՊ ընկերությունը 11.09.2024թ. գրությամբ (մտից՝ 17.09.2024թ., N 12674) դիմել է Մասիսի համայնքապետարան՝ խնդրելով լուծել կնքված պայմանագրերը, ուստի վերոնշյալ պայմանագրերը կհամարվեն միակողմանի մասնակի լուծված սույն ծանուցումը Պատվիրատու կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Միաժամանակ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ձեր ընկերության կողմից որպես 15.08.2024թ. կնքված N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/77-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ 612 591 (վեց հարյուր տասներկու հազար հինգ հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովումը՝ 408 394 (չորս հարյուր ութ հազար երեք հարյուր իննսունչորս) ՀՀ դրամի չափով և 15.08.2024թ. կնքված N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/81-2 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում՝ որակավորման ապահովումը՝ 101

485 (մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովումը՝ 67 657 (վաթսունյոթ հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև պայմանագրերի 6-րդ կետով նախատեսված տույժերը և տուգանքը վճարել Մասիսի համայնքապետարանի 900 435 002 101 հաշվեհամարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում պայմանագրերի որակավորման և պայմանագրերի կատարման ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Նորայր Հակոբյան**

Կապ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան